ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

21 փետրվարի, 2019 թվականի № 9-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի № 50-Լ որոշմամբ հաստատված (2011 թվականի մարտի 28-ի № 21-Լ որոշմամբ փոփոխված)՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր տնօրենների թափուր տեղերի մրցույթի անցկացման կարգի պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարել մրցույթ և ստեղծել մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողով հետևյալ կազմով՝
   - Երվանդ Երզնկյան՝ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի Էստրադային սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր (Հանձնաժողովի նախագահ)
   - Մերուժան Տեր-Գուլանյան՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ
   - Մարատ Օրդյան՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի եթերի բովանդակության վերահսկող
   - Սարգիս Նաջարյան «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի հաղորդման խմբագիր, հեղինակ
   - Լևոն Գալստյան՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ (Հանձնաժողովի քարտուղար)

2. Հավանություն տալ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարության տեքստին (ըստ N 1 հավելվածի) և այն ոչ ուշ, քան 2019 թվականի փետրվարի 26-ը հրապարակել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և/կամ Հայաստանի հանրային ռադիոյով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ

21 փետրվար, 2019 թվականի

ք. Երևան

Հավելված N 1
ՀՀ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի
2019 թվականի փետրվարի 21-ի N 9-Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հայտարարում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթ:

Մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով լրագրության, իրավագիտության և/կամ հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառում հեղինակավոր և որակյալ մասնագետ է, գիտության, մշակույթի և/կամ արվեստի գործիչ, ունի բարձրագույն կրթություն և տիրապետում է հայոց լեզվին:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
ա) դիմում,
բ) անձնագրի պատճեն,
գ) բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթղթի պատճեն,
դ) ինքնակենսագրություն (մանրամասն),
ե) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը),
զ) երկու լուսանկար՝ 3x4 չափսի:

Փաստաթղթերը մրցույթի կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղարին են ներկայացվում մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցներով հայտարարմանը հաջորդող տասն օրվա ընթացքում (բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի) ժամը 11:00-ից մինչև 17:00, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. 010-57-85-02, 091-425-722): Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվում:

Մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողովը մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ընդունելու վերջին օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը և որոշում է կայացնում մրցույթում հաղթող ճանաչելու մասին: Անհրաժեշտության դեպքում, մինչև մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշում կայացնելը, հանձնաժողովը կարող է մրցույթի մասնակիցների հետ անցկացնել հարցազրույց: